ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/267

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.10.2021թ. թիվ 26/26-1/16721-2021 գրությամբ «Էներգացանցշին» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 06.10.2021թ. թիվ 01/14-24047 գրության հիման վրա, 13.10.2021թ. թիվ 26/26-1/16721-2021 գրությամբ նախաձեռնել է «Էներգացանցշին» ԲԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էներգացանցշին» ԲԲԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Էներգացանցշին» ԲԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/267 ընթացակարգի շրջանակներում 18.10.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.10.2021թ. թիվ 01/14-24047 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Էներգացանցշին» ԲԲԸ-ի միջև 14.05.2021թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28-1» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքում «Հետիոտնային կանչի» ռեժիմով աշխատող թվով 49 լուսացուցային համակարգերի ձեռքբերման և տեղակայման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 3.1 կետով սահմանված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները՝ 8.15 կետով իրականացնող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչությունը 30.08.2021թ. հ.14/20510 դիմել է «Էներգացանցշին» ԲԲԸ-ի տնօրենին տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքներն ավարտելու համար, տալով լրացուցիչ 10 օր ժամանակ, սակայն վերջինիս կողմից համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և

ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Էներգացանցշին» ԲԲԸ խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, հրաժարվել է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ, առաջարկում եմ «Էներգացանցշին» ԲԲԸ-ի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/267 ընթացակարգի շրջանակներում 18.10.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/267 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/267 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Երևանի քաղաքապետարանի և «Էներգացանցշին» ԲԲԸ-ի միջև 14.05.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28-1» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքում հոտիոտնային կանչի թվով 49 լուսացուցային համակարգերի ձեռք բերման և տեղակայման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2.Պայմանագրին կից հավելված N 2-ի՝ օրացուցային գրաֆիկի համաձայն՝ սահմանվել է աշխատանքների կատարման հետևյալ ժամկետը. «սկիզբը՝ Պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից, ավարտը՝ 46 օրացուցային օր»:

3. Երևանի քաղաքապետարանի և «ԷՅՋԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի միջև 05.05.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/26-2» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի կարիքների համար «Հետիոտնային կանչի» թվով 63 լուսացուցային համակարգերի ձեռքբերման և տեղադրման

աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (...):

4. Պատվիրատուն «Էներգացանցշին» ԲԲԸ-ին ուղղված 30.08.2021թ. թիվ 14/20510 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ Երևանի քաղաքապետարանի և «Էներգացանցշին» ԲԲԸ-ի միջև կնքված՝ 14.05.2021թ. h ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28-1 պայմանագրով նախատեսված աշխատանքները դեռ չեն կատարվել:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ընկերության ներկայացուցչի հետ տեղի ունեցած հեռախոսազանգերի, ինչպես նաև հանդիպումների ընթացքում վերջինս բանավոր զգուշացվել է վերոգրյալի վերաբերյալ, սակայն ապարդյուն:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով հիշյալ պայմանագրով նախատեսված դրույթները, պատվիրատուի կողմից տրվում է լրացուցիչ ժամանակ 10 օր՝ պայմանագրով նախատեսված աշխատանքներն ավարտելու համար:

Հարկ եմ համարում նշել նաև, որ լրացուցիչ ժամկետն ավարտվելուց հետո, պայմանագրով նախատեսված աշխատանքների թերի կամ այն չկատարելու պարագայում, պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծարման՝ համաձայն հիշյալ պայմանագրի 3.1.1 կետի»:

5. Պատվիրատուն «Էներգացանցշին» ԲԲԸ-ին ուղղված 28.09.2021թ. թիվ 14/23214 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն Երևանի քաղաքապետարանի և Ձեր ընկերության միջև կնքված կապալային աշխատանքների կատարման գնման 14.05.2021թ. h. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28-1» պայմանագրի՝ Ձեր ընկերությունը որպես «Կապալառու», 46 օրացուցային օր ժամկետում պետք է իրականացներ Երևան քաղաքում «Հետիոտնային կանչ» ռեժիմով աշխատող թվով 49 լուսացուցային համակարգերի ձեռքբերման և տեղակայման աշխատանքներ:

Ձեր ընկերության ներկայացուցչի հետ բազմաթիվ անգամ տեղի ունեցած հեռախոսազրույցների, ինչպես նաև հանդիպումների ընթացքում, վերջինս զգուշացվել է պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ոչ բավարար ընթացքի մասին, իսկ վարչության 30.08.2021թ. h.14/20510 գրությամբ, հիմք ընդունելով պայմանագրի դրույթները, տրվել էր լրացուցիչ 10 օր ժամանակ՝ պայմանագրով նախատեսված աշխատանքներն ավարտելու համար: Միաժամանակ նույն գրությամբ նախազգուշացվել էր, որ նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում

չկատարելու կամ թերի կատարելու պարագայում, պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման, ինչն ամրագրված է նաև պայմանագրում:

Հարկ եմ համարում նաև տեղեկացնել, որ համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/26-2 կնքված պայմանագրի՝ նախատեսված աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն իրականացնող «ԷՅՋԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ն նույնպես գրավոր տեղեկացրել է, որ Ձեր կողմից նախատեսված շինարարական աշխատանքները չեն իրականացվում:

Հաշվի առնելով վերը նշված և հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի ա) ենթակետի պահանջը՝ տեղեկացնում եմ, որ պատվիրատուի կողմից միակողմանի լուծվել է հ. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28-1» 14.05.2021թ. պայմանագիրը»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 30.09.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.10.2021թ. թիվ 26/26-1/16721-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 06.10.2021թ. թիվ 01/14-24047 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և «Էներգացանցշին» ԲԲԸ-ի միջև 14.05.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28-1» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքում

հոտիոտնային կանչի թվով 49 լուսացուցային համակարգերի ձեռք բերման և տեղակայման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրին կից հավելված N 2-ի՝ օրացուցային գրաֆիկի, համաձայն՝ սահմանվել է աշխատանքների կատարման հետևյալ ժամկետը. սկիզբը՝ ***Պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից, ավարտը՝ 46 օրացուցային օր:***

Երևանի քաղաքապետարանի և «ԷՅՋԻԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի միջև 05.05.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/26-2» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի կարիքների համար «Հետիոտնային կանչի» թվով 63 լուսացուցային համակարգերի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների որակի ***տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը*** (...):

Պատվիրատուն «Էներգացանցշին» ԲԲԸ-ին ուղղված 30.08.2021թ. թիվ 14/20510 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ Երևանի քաղաքապետարանի և «Էներգացանցշին» ԲԲԸ-ի միջև կնքված՝ 14.05.2021թ. h ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28-1 պայմանագրով նախատեսված աշխատանքները դեռ չեն կատարվել:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ընկերության ներկայացուցչի հետ տեղի ունեցած հեռախոսազանգերի, ինչպես նաև հանդիպումների ընթացքում վերջինս բանավոր զգուշացվել է վերոգրյալի վերաբերյալ, սակայն ապարդյուն:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով հիշյալ պայմանագրով նախատեսված դրույթները, պատվիրատուի կողմից տրվում է լրացուցիչ ժամանակ 10 օր՝ պայմանագրով նախատեսված աշխատանքներն ավարտելու համար:

Հարկ եմ համարում նշել նաև, որ լրացուցիչ ժամկետն ավարտվելուց հետո, պայմանագրով նախատեսված աշխատանքների թերի կամ այն չկատարելու պարագայում, պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծարման՝ համաձայն հիշյալ պայմանագրի 3.1.1 կետի»:

Պատվիրատուն «Էներգացանցշին» ԲԲԸ-ին ուղղված 28.09.2021թ. թիվ 14/23214 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն Երևանի քաղաքապետարանի և Ձեր ընկերության միջև կնքված կապալային աշխատանքների կատարման գնման 14.05.2021թ. հ. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28-1» պայմանագրի՝ Ձեր ընկերությունը որպես «Կապալառու», 46 օրացուցային օր ժամկետում պետք է իրականացներ Երևան քաղաքում «Հետիոտնային կանչ» ռեժիմով աշխատող թվով 49 լուսացուցային համակարգերի ձեռքբերման և տեղակայման աշխատանքներ:

Ձեր ընկերության ներկայացուցչի հետ բազմաթիվ անգամ տեղի ունեցած հեռախոսազրույցների, ինչպես նաև հանդիպումների ընթացքում, վերջինս զգուշացվել է պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ոչ բավարար ընթացքի մասին, իսկ վարչության 30.08.2021թ. հ.14/20510 գրությամբ, հիմք ընդունելով պայմանագրի դրույթները, տրվել էր լրացուցիչ 10 օր ժամանակ՝ պայմանագրով նախատեսված աշխատանքներն ավարտելու համար: Միաժամանակ նույն գրությամբ նախազգուշացվել էր, որ նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում չկատարելու կամ թերի կատարելու պարագայում, պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման, ինչն ամրագրված է նաև պայմանագրում:

Հարկ եմ համարում նաև տեղեկացնել, որ համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից ԵՔ-ԲՄԽԾՁԲ-21/26-2 կնքված պայմանագրի՝ նախատեսված աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն իրականացնող «ԷՅՋԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ն նույնպես գրավոր տեղեկացրել է, որ Ձեր կողմից նախատեսված շինարարական աշխատանքները չեն իրականացվում:

Հաշվի առնելով վերը նշված և հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի ա) ենթակետի պահանջը՝ տեղեկացնում եմ, որ պատվիրատուի կողմից միակողմանի լուծվել է հ. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28-1» 14.05.2021թ. պայմանագիրը»:

<u>Պատվիրատուի կողմից 30.09.2021թ. Տեղեկագրում հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 3.1.4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

Պայմանագրի 6.6-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Էներգացանցշին» ԲԲԸ-ն խախտել է իր և Երևանի քաղաքապետարանի միջև 14.05.2021թ. կնքված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/28-1» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Էներգացանցշին» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.10.2021թ. թիվ 26/26-1/16721-2021 գրությամբ «Էներգացանցշին» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էներգացանցշին» ԲԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**